

չափեն : Թէ որ մէկը քեզի ըսեր որ
 Այդ քաղի կարող ինչիքն արձանի փոխ-
 ցաւ , ան նի-կերը իրենք իրենցմէ քովէ քով
 գալով միացան , բայց անանի կերպով որ հան-
 գիսաւ ու գեղեցիկ պալատ մը յետ-ացոյցին .
 ան մեքաղները պալատահամբ մեկմեկու հե-
 միանալով ապա խառնաշփոխ յետ-ացոյցին . Թէ
 որ մէկը քեզի ասանկ ըսեր , խենթի
 տեղ չէի՞ր դներ այնպիսին : Ո՞րչափ
 աւելի խենթ պէտք է սեպենք այն
 մարդը , ով որ կ'ըսէ որ աս աշխարհքս
 ասանկ կարգաւորեալ , ասանկ կա-
 տարեալ ինքիրեն եղած է :

Բայց ո՞վ ուրեմն կազմեց ասիկայ ,
 ով կարգաւորեց :

Եւ ճնայ , ուսկից , իմ հօրէս . իմ
 հայրս , պապէս . պապս , իր հօրէն ,
 ինքն ալ ուրիշ հօրէ մը , եւ այսպէս
 առաջ կ'երթանք ինչուան որ հաս-
 նինք առջի մարդուն . բայց ասիկայ
 ուսկից կրնայ առաջ եկած ըլլալ , ու-
 րիշ մարդէ մը չէ , վասն զի ան ատեն
 ինքն առջինը չէր ըլլար , ուրեմն ա-
 նանկ էակէ մը՝ որ մարդէ մը անհա-
 մեմատ վեր եղած ըլլայ , և ինքն ան-
 սկիզբն ըլլալով՝ ուրիշ ամեն բանե-
 րուն սկիզբն տուած ըլլայ :

Եւ ամեն բաներուն հեղինակը ,
 աս առաջին շարժողը , աս կարգաւո-
 րողը , աս առաջին պատճառը , աս
 ընդհանրական հայրն է , ԱՍՏՈՒԱԾ :

Պիտի շարունակուի :

ՆՇԽԱՐԲ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն , տես թիւ 9 , երես 143 :)

Երբ թեքիրտաղու այլադգիք կըր-
 կին իրենց տները ընդունեցին խեղճ
 հայերը ըստ հրամանաց դատաւորին ,
 Գրիգոր վարդապետ ու քահանայք
 և երեւելի ազգայինք մէկտեղ ժող

վելով , խորհուրդ ըրին , ու Գրիգոր
 վարդապետը քանի մը քահանայիւք
 և ժողովրդեան կողմէն քանի մի ե-
 րեսփոխաններով խրկեցին ի Պօլս
 Նաղաշի գործած մատնութեանը հա-
 մար գանգատ ընելու իրենց առաջ-
 նորդ Յակոբ վարդապետին , որ նոյն
 դէպքը պատահած ժամանակ ի Պօ-
 լս գնացած էր : Տէր Նաղար որով
 հետեւ ազգեցութեան տէր անձ մի
 էր , և նոյն ժամանակի Պօլսոյ յառա-
 ջակայ ազգապետաց հետ մտերմա-
 ցած , վասն որոյ Յակոբ վարդապետ
 որքան ուզեց զանկիայ ի դատաստան
 կոչել , սակայն թէ անոր պաշտպան-
 ներէն ակնածելով , և թէ վախնալով
 որ չըլլայ թէ անոր պատճառաւ ազ-
 գապետաց հետ խռովելով , արգելք
 ըլլան թեքիրտաղու մէջ հիմնարկե-
 լիք եկեղեցւոյ շինութեանը , վասն
 որոյ տէր Նաղար ոչ միայն առանց
 պատժոյ մնաց , այլեւ աւելի փա-
 ռաւորեցաւ . քանզի Գրիգոր Բ . Պօլ-
 սոյ Պատրիարքը այն միջոցին ի Կեսա-
 ռիա իւր հայրենիքը գտնուելով , խըր-
 կեցին զՆաղաշ որ երթայ բերէ զին-
 քը իւր Աթոռը : Եւ ինչպէս կ'ըսէ
 ականատես պատմիչը , « Յետ քանի
 մի աւուրց Կեսարացին (Գրիգոր
 Պատրիարք) մեծաւ ամբօխիւ ե-
 մուտ ի Իլիզանդիա անհեղափոխ եւ
 խրոխտ կերպիւ որպէս զառիւծ , որ
 ամենայն Հայոց ազգն սարսեցին ի
 նմանէ : (1)

Յակոբ վարդապետ , ինչպէս հա-
 ւանական կը թուի , թեքիրտաղ դառ-
 նալուն , եկեղեցւոյ հիմնարկութեան
 անմիջապէս հոգ տարած է , որոյ շի-
 նութեան հրովարտակը , ինչպէս ը-

(1) Գրիգոր Պատրիարքի թէ քնաւորութիւնը և
 թէ իւր իշխանութեան ժամանակ գործածները յա-
 տուկ յօդուածով հրատարակելու կարեւորութիւն
 ունի :

սինք, առ աջնորդութեան հետ մէկ տեղ ստացած էր : Եւ սոյն ձեռնարկութիւնը օր մի առաջ ի գլուխ տանելու համար ստիպուած էր նաեւ առահի Վրիգոր Պատրիարքին, որոյ հետ աւրուած ըլլալով յիշեալ հոգևորտակը ոչ անոր Լաֆրերիւն, այլ ինչպէս գրած եմք, ազգային քանի մի երեւելեաց և իւր բարեկամ Լեւոն չէր աղասի Խաչիլ Փաշային միջնորդութեամբն ստացած էր թէ հոգևորտակը և թէ առաջնորդական պաշտօնին հրամանագիրը :

Հոս պատմութեան կարգը կը ստիպէ զմեզ ուրիշ դէպքի մի դարձնել մեր տեսութիւնը :

Ղէլալիք սոյն միջոցին (1608—1609) այն աստիճան զօրացեր էին, մինչեւ կայսերանիստ քաղքին մօտենալով կը սպառնային յարձակում տալու, որոնց կողմէն լրտեսներ շատ նալով մայրաքաղաքին մէջ, թէ տաճիկ եւ թէ հայ անծանօթ մարդիկ առանց երաշխաւորի չէին թողուր պտըտիլ : Սոյն Ղէլալիներուն գլխաւորներէն Վալանդար օղլու կոչուածը ահագին զօրօք Պրուսայի վերայ յարձակելով կը թալանէ քաղաքը, և պժգալի խայտառակութեամբ պատուաւոր ընտանեաց սիրտը դառն սրգով կը լեցնեն : որոյ վերայ թէպէտ Սուլթան Նիմէտ բանակաւ կու գայ, բայց չկարենալով անոր ընդդիմութիւնը խորտակելու, ունայն ետ կը դառնայ իւր լիթուր : Սուրատ Փաշայ Վուլուճու անուանեալ, որ այն ժամանակ առաջին Վէզիր էր, յանձն առնելով Նատուլուի ընդհանուր սպարապետութիւնը, անթիւ զօրօք կը յարձակի ելուզակաց վերայ : ձերբակալ կ'ընէ անոնց գլխաւորները, որք են Սուրատ խոնցի երեք եղբարքը Սուրատ Փաշայ, Իպրա-

հիմ Պէկ և Սուրատ Պէկ, և Բաբերթի կողման Շիրին Պէկը և ուրիշ անհամար գլխաւորները իրենց զօրքերովը մէկտեղ ի սուր անցընելով, զանոնք ամենքը առաջուց պատուաստուած փոսերու մէջ լեցընել կու տայ : որոնց մէջ երկու երեք մարդիկ իջնելով, կ'ըսէ ականատես մի, անոնց դիակները կարգաւ կը շարեն և լեցուէն յետոյ փայտերով և հողով կը ծածկէին : Եւսպէս Սուրատ Փաշայի ձեռք կը յաջողէ Տէր, և անչափ անմեղ արեանց և արտասուաց վերջ կու տայ, բառնալով յաշխարհէս անօրէն Ղէլալեաց չար ծընունդը :

Սուրատ Փաշայ երբ յաղթանակաւ ետ դարձաւ և փառաւոր հանդէսով մտաւ ի մայրաքաղաքն (1609 ին վերջերը), հրաման հանել տուաւ Սուլթան Նիմէտէն, և մուսնետիկի ձեռք իմաց տուաւ բոլոր քաղաքին, թէ որքան պանդուխտք որ կան Պօլսոյ մէջ թէ տաճիկ և թէ քրիստոնեայ, մինչեւ երեք ամիս ամենքն ալ պատրաստուին իրենց հայրենիքը դառնալու : և կը սպառնայր նաեւ որ պայմանեալ օրը անցնէն յետոյ գտնուող պանդուխտք պիտի աքսորուին : Սոյն հրամանը ամեն ամագլխին մուսնետիկը կը կրկնէր բոլոր մայրաքաղաքին մէջ : Պայմանեալ ժամանակը ըրանալուն ոստիկաններ եւ լալաշներ խրկուեցան Պօլսոյ բոլոր թաղերը ու շրջակաները, որոնք ուր որ օտար մարդիկ գտնէին, բռնութեամբ և ըսպառնալեօք դուրս կ'ընէին և կը փութացընէին անմիջապէս ճամբայ ելնելու : և երբ տակաւին շատերը կը դանդաղէին մեկնելու, ոստիկանութեան մարդիկը սկսան այնուհետեւ բռնութեամբ ֆալխայով պտըտիլ, և տանը մէջ անյայտ տեղուանք պահուրտող-

ները իւրաքանչիւր թաղի իմամներուն ձեռքովը դուրս հանելով, կարասիները դուրս թափեցին ու դռները կղպեցին: Աւելորդ է նկարագրել աղէտալի տեսարանիս պարագայները. միայն այսչափ կ'ըսեմ որ անհնար էր տեսնել խեղճ կանայքն ու մանկտիքն անտէրունչ ու անօգնական մնացած փողոցներուն մէջ, ու աղէխարշ չըլլալ, և քանի մի կաթիլներ անոնց աղի արտասուածքը հետ չխառնել: Ողորմելի աղգայինք երբ տեսան իրենց մէջ և իրենց բաղդին վիճակեալ նաեւ Վրիգոր վարդապետը կամախեցին, ինկան ոտքը և ստիպեցին որ ինքը տիրութիւն ընելով՝ առաջնորդէ իրենց մինչեւ ի հայրենիք: Յանձն առաւ աղգասիրութիւն և մինչեւ յերկիրն անոնց ընկերացաւ: Հրամանը որքան որ սաստիկ էր, սակայն դտնուեցան շատերն ալ որ թէ կաշառօք և թէ արքունի գործակալաց ձեռքին տակ ծառայելով՝ մնացին տեղերնին, ինչպէս նաեւ անոնք որ Սուլդան Ահմէտի կոչուած մըզկըթին մէջ կը բանէին:

Այս հրամանը թէքիրտաղ ալ խրկուեցաւ, և արքունի մօռնետիկը սկսաւ սպառնալեօք ստիպել այն տեղի նոր դաղթականութիւնը, որ իրենց երկիրը դառնան: Բայց Աստուած անոնց առջի քաշած նեղութիւնները յիշելով ողորմեցաւ, եւ զիրենք դուրս հանելու համար խըրկուող ոստիկանաց սիրտը քաղցրացոյց. մօտիկ ըրին սիրով խեղճ ժողովդոց խնդիրը, որոնք կ'առաջարկէին հնազանդիլ արքունի հրամանաց, և կը խնդրէին որ իրենց մինչեւ աշնան եղանակը ժամանակ շնորհուի, որպէս զի իւրաքանչիւր ոք իրենց արտերը հնձեն ու այգիներն քաղեն. վասն զի, կ'ըսէին, մեր բոլոր ըս-

տացուածքները հողոյն աւանդած եմք, որովհետեւ ամենքն ալ հողագործ ու այգեգործ էին: Անոնց այս իրաւացի խնդիրն ընդունուեցաւ, և միջոց շնորհուեցաւ իրենց՝ մինչեւ աշուն: Իսկ երբ ժամանակը քիչ միանցաւ, արքունի հրամանն ալ բնականապէս թուլցաւ. պայմանեալ օրերն եկան մօտեցան, և ոչ ոք յիշեց զիրենք, եւ ոչ մէկուն դուռը ոստիկանութե մարդ եկաւ զիրենք դուրս ընելու. այսպէս մնացին թէքիրտաղու կամախեցի աղգայինք իրենց տեղը մինչեւ ցայսօր:

Տասը տարի անցեր էր այս գէտքերուս վերայ, խեղճ ժողովուրդը իրենց նոր հայրենեացը հաղիւ սովորելով, և իւրաքանչիւր ոք իրենց բանին գործին ետեւէ ինկած՝ սրը երկրագործութեան, սրը այգեգործութեան և ուրիշ ծառայական արհեստներու պարապելով՝ իրենց օրական պիտոյքը հոգալու կը զբաղէին, եւ քիչ շատ հողի տէր ալ եղած էին, երբ յանկարծ նոր փորձանք մի դարձեալ զիրենք խռովեց: 1620 դեկտեմբեր ամսոյն մէջ, հայ երիտասարդին մէկը, որ արհեստիւ բամբակ գող (հալաճ) էր, բամբակի համար հող մի մի տուն երթալով և հոն չափահաս աղջկան մի հետ սիրահարուելով՝ խօսք մէկ կ'ընեն զիրար առնելու. աղջկան ծնողքն ալ հաճութիւն կուտայ անոնց միաւորութեանը: Երիտասարդը առաջնորդին կ'իմացնէ և կը խնդրէ որ հայ եկեղեցւոյ մէջ քահանայից ձեռօք պսակուին: Առաջնորդը յունացմէ կասկածելով և ասպագայ խռովութեան տեղիք չտալու համար հաճութիւն չտար. եւ երկու սիրահարեալք մանչուն տանը մէջ հայ քահանայի ձեռօք կ'ընդունին պսակին օրհնութիւնը: Տեղւոյն

այլազգի ռամիկ ժողովուրդը գիտնալով որ այս բանս Յուճնաց ազգային ոգւոյն խիտ հակառակ է, կը սկսին երգիծաբանութեամբ զանոնք գրողներէլ, որոնք չկարենալով համբերել մէջերնէն խումբ մի տարգլուխ սատանիք միարանելով՝ լուսնի պարզ գիշեր մի կ'երթան Հայոց պարտեզները մէկ շատ ծառատունկեր կը կտորտեն և 16 այգի կ'աւրեն բնաջինջ կ'ընեն : Յետոյ այլազգեաց հետ կը միարանին և զանոնք Հայոց դէմ կը զայրացնեն ըսելով, թէ «մենք Յոյք և Տաճիկ՝ այս քաղքի բուն բընակիչներն ենք, Հայք դեռ երեկ եկան և մեր բոլոր կալուածոց և այգիներուն տիրեցին, եւ մէկ ստակ եւս հարկ չեն վճարեր տէրութեան : Եկէք զանոնք հալածենք և իրենց ըստացուածքները մեք ժառանգեմք » : Այս գիււական խորհուրդս՝ որ իշտրիս միշտ միաբան կ'ըլլայ ըստ առածին, շուտով ի գլուխ կ'ելնէ : Տաճկաց մէջէն յիսուն հոգի ճակատ մի կը գրեն, կը կնքեն ու կու տան Յուճնաց, եւ անմիջապէս վաթսուն հոռոմ ճամբայ կ'յնին Պօլիս երթալու և Հայոց համար բողոք ընելու Բ. Դուռը : Հայք ըսելով զայս՝ Յուճնաց ետեւէն իսկոյն քանի մի անձինք կ'ուղարկեն մայրաքաղաքը, ազգին կառավարութեանը իրենց վիճակը իմացնելու :

Այն ժամանակները երեւելի էր Պօլսոյ ազգայնոց մէջ Խալֆա Ատուածատուր Ամիրան, և ուրիշ շատ ամիրաններ, որոնց խօսքը երկուք չէր ըլլար տէրութեան պաշտօնէից քով : Խալֆա Ատուածատուրը սիրելի էր առաւելապէս Հասան Փաշայ վէզիրին և ի մանկութենէ եղբայրագիր եղած էր անոր, որ դեռ խաւսի եղած ժամանակ, նոր մզկիթին վերայ

հաստակ (բայա) դրել տուած էր պանդուխտ հայերը և ներքինապետին խնամոցը յանձնած : Թէքիրտաղի հայք շուտ մի Ատուածատուր ամիրային եղելութիւնը հասկըցնելով, և անոր միջնորդութեամբ Հասան Փաշայի ախանջ հասնելով, երբ ասիկայ իւր պալատէն ելնելով ձիով ատենը կ'երթար, Յոյք պատրաստուած անոր ճամբուն վերայ՝ երկու կարգ շարուած կը սպասէին գլխաւորնուն վերելը բարձր բռնելով ճակատը, երբ տեսաւ զանոնք մեծ Վէզիրը, իբր յանգէտս հարցուց՝ թէ ո՞վ են ասոնք : Յոյք մէկէն երկու կողմանց այնպէս փութացին Վէզիրին վերայ ճակատը տալու համար, որ ձին խրաչելով քիչ մնաց գետին պիտի ձգէր Հասան Փաշայն : Ասոր վերայ զայրոյթը աւելնալով փրփրեցաւ Յուճնաց դէմ, ու ճակատն առնելով պատուեց նետեց, ու հրաման ըրաւ իւր մարդոց որ բռնեն զանոնք ու Խալֆային լեցնեն : Այս սպառնալիքէն լեզապատառ եղած փախչող փախչողի եղան, ու եօթը հոգի միայն ձեռք անցնելով նետեցին Խալֆային, ու մընացեալները ամօթով ու լռիկ դարձան մէկիկ մէկիկ Թէքիրտաղ : Շատ ժամանակ չանցաւ, Հայերն ալ ետ դարձան հրամանագրով ու Դաւալը, որ քննութիւն ընելով և այգիներուն փաստ ուղղները գտնելով՝ ըստ արժանւոյն պատժուին : Այդ գետտանին մօտ Սուրսաթլու ըսուած գիւղի տաճկիւնները թէպէտ եւ եկած էին վկայութի տալու, սակայն հոռմըները անոնց դիմացին ելնելով կը կաշառեն եւ ետ կը դարձնեն, եւ այսպէս վիսները ոմանք երկիւղիւ և ոմանք կաշառքով կը լսեն, բայց Յուճնաց ամբարտաւանութեան եղջիւրներն արդէն փշուած էին :

Գտնեք երկու տարացեղ ամուսնացելոց : Այդիներուն գէպքէն առաջ Յոյնք աղջկան ծնողացը գէմ սկսան զայրանալ և մահուան սպառնալիքներով ահաղայնել . որոնք առ երկիւղի ուրացան իրենց հաճութիւնն տալը , ու աղբին կամացը յանձնեցին որ ուղածնուն պէս վրէժխնդիր ըլլան երկու տարաբաղգ ամուսնեւորուն : Իսկոյն քանի մի երկտասարգ կը կոխեն մանչուն տունը և աղջիկը յափըշտակելով կը տանին գատաւորին , ու միաբերան կը պօռան՝ թէ լաւ է տաճկանայ քան չայ ըլլայ . եւ բռնութեամբ զինքը կը տաճկացնեն . ու մանչն ալ որ հետերնին կ'երթար , լաւ մի կը ծեծեն ու կը թողուն : Այս որպէս զի չըլլայ թէ աղջիկը նորէն էրկանը քով փախչի երթայ , Իմամի մի տունը ի պահ կու տան զինքը . խեղճը ամենայն զօրութեամբ կը պօռար թէ չայ եմ և քրիստոնեայ , բայց մտիկ ընող չկար . երեք օր ոչ հայց կ'ուտէ և ոչ ջուր կը խմէ . օրերն ալ Օննգեան պահոց մէջ էր . Յոյնք որովհետեւ այն շաբաթը մտեղէն կ'ուտեն , չարութեամբ ուտեաց կէրակուր կը տանին իրեն որ չայու պասը աւրել տան . բայց աղջիկը եւ ոչ ամանին վերայ ակնարկ մի կը ձգէ : Աղորմելին ազատութեան ճար չգտնելով լուր կու տայ էրկանը որ գայ զինքը գաղտնաբար յափըշտակէ ու անծանօթ երկիր մի երթալով հոն կրկին իւր հաւատքը պաշտէ : Երկտասարգը երբ տեսաւ որ զանկայ գողնալու ճարը չկար , գնաց գատաւորին քով ու խօսք տուաւ տաճկանալու և իւր կինը առնելու : Սիրով ընդունուեցաւ անոր խնդիրքն ու գաւանութիւնը , բայց մնաց առանց թրփատուելու . զոր տեսնելով Յոյնքահանայ մի Շէյթան փափազ ա-

նուն , սկսաւ ճիչ բառնալ ու ըսել՝ թէ թրփատեցէք զինքը , որ չերթայ կրկին հայութիւն ընէ : Ամուսնական սէրը անոր ալ գէմ չկեցաւ , ընդունեց թրփատութիւնը , ու մէկ քանի օր սպասելէն յետոյ առաւ իւր կինն ու փախաւ օտար երկիր . հոն ապաշխարեցին երկու սիրակից ամուսինք , և զղջման արտասուքներով լըւացին իրենց հողւոյն աղուր , զոր աշխարհային սիրոյն բռնութենէն կըրեցին :

Այսքան չարիքն բաւական չսեպելով Յոյնք , գիշեր ժամանակ յարձակեցան ռէիս Երօէս անուն երեւելի մարդուն տունը քարտեցին . և որովհետեւ քաղաքական անձ մի էր Երօէս , նոյն ժամուն իրեն քով զօրաց բանակի վերաբերեալ բաւական մարդիկ գտնուելով , դուրս կ'ելնեն ու քարկոծողներէն քանի մի հագի կը բռնեն , և հետեւեալ առտուն ի գատարան կը տանին և գատաստան ընել տալով՝ գատաւորէն վճույթ ուղղթ կ'առնուն որ Սօլիս տանելով և տէրութեան հրամանաւ մահուամբ պատժել տան զանոնք : Իսկ քաղաքին մեծամեծ տաճկները Յունաց կամակից ըլլալով , միջնորդ եղան և աղատեցին յանցաւորները և բանակի մարդոց ալ սիրտը առին :

Այն տարին էր որ սաստիկ ձմեռ և ահագին ձիւն գալով այն աստիճան ցրտեց , որ Սոփորի ծովը պաղեցաւ , և Վալթիայէն Իւսկիւտար քայլելով կ'երթային կու դային , ի թագաւորութեան Սուլթան Օսմանայ Բ. յամի Փրկչին 1621 եւ յունուար ամսոյն 17 ին :

Ի յաջորդէն :